

կը յատկացնէին: Այս բոլորը լսելով և ստուգելով սուրբ հայրապետը, տեսէր թէ ինչպէս խստիւ և անաչառ կերպով կը յանդիմանէ զիրենք. «Ձինչ պատճառս և հնարս հնարեսցի եպիսկոպոսն, յորժամ զաւանդն արըունի զգուշութեամբ ո՛չ պահեսցէ, և ծախեսցէ այնոցիկ՝ որոց ո՛չ իցէ օրէն. այսպիսի ինչ, յորժամ զգեստիւքն զինքն պճնեսցէ և փերեւերտիցէ՝ սրգութեան և փափկութեան պարապելով¹»: Սոյն խօսքերը զբաժ ատեն յիշէր է արդեօք իրեն նախորդ կաթողիկոսներէն Չաւէնը, որ զրեթէ նոյնպիսի բառերով ու բացատրութեամբ նկարագրուած է Փ. Բիւզանդէն²:

Ո՛չ մէկ հայրապետ կամ կաթողիկոս երբեք այսպիսի խիստ և անաչառ լեզու մը գործածեր է եպիսկոպոսներու դէմ, և ինչպէս կրնային անոնք՝ այդպիսի վարքով և ընթացքով՝ յարգանք և հլուութիւն պահանջել իրենց հօտէն: Ան գերազանցօրէն արի և արդար էր, չէր գիտեր ինչ է ակնառութիւն կամ նկատում, երբ օրէնքը ու խիղճը կը պարտաւորէին զինքը՝ արծակելու շանթերու նման իր դառն ու զկծեցուցիչ յանդիմանութիւնները, որոնք այնքան աւելի ազդու և հեղինակաւոր կը դառնային, որքան որ անարատ ու անբաստ գիւտ էին իր վարքն ու գործերը: Ան իր խօսքին ու կշտամբանքին կը միացնէ պատիժ ու պատուհաս, Աստուծոյ անաչառ դատաստանին յանձնելով զիրենք. «Արդ, եթէ գտցի ոք եպիսկոպոս և յառաջնորդս եկեղեցւոյ յայսպիսի պատուիրանազանցութիւն անամօթ և յանառակութեան, ի բաց ընկեսցի ի պատուոյ իւրմէ, և բաժին նորա ընդ կեղծաւորս եղիցի³»:

2. — Այս սճով ու հոգով կը ձաղէ ու կը ձաղկէ նաև Քորեպիսկոպոս կոչուած պաշտօնեաները, զխաւոր օգնա-

կանները եպիսկոպոսներուն, որ «տեսուչք և առաջնորդք զաւառաց և զիւղից⁴» կը կոչուին Ս. Սահակէն, որոնցմէ խստիւ կը պահանջէ որ ըլլան «մաքուր յարծաթ սիրութեան ախտէն և ձեռք իւրեանց ի կաշառաց, ուսումնասէրք և պարկեշտք⁵»: կը պատուիրէ անոնց ամէն յարգանքով ու պատուով հսկել և պահել սուրբ սեղանը «լուցմամբք և խնկարկութեամբ, և պարսպեալ քաղաքորմովք, և մերձ ի նա մկրտատունս շինել⁶»: Կը պահանջէ որ «պաշտօն սաղմոսերգութեան անխափան կացցէ ի տուրնջեան և ի գիշերի», և բացարձակ կ'արգիլէ անոր մէջ ո՛ր և է նորաձեւութիւն, հրամայելով որ «յանդիմանեսցն և կշտամբեսցն և զանիւք տուգանօք պատուհասեսցն⁷» զանցառուները:

3. — Քորեպիսկոպոսները պարտական էին ամէն տարի այցելել իրենց պատկանող քաղաքները և զիւղերը, քննելու թէ քահանայք և սարկաւազները կը կատարէին ճշդիւ իրենց պարտականութիւնները, ժամերգութիւնները, աղօթքները և մանաւանդ սուրբ խորհուրդներու մատակարարութիւնը: Կը պատուիրէ անոնց խստիւ՝ զգուշացնել անարժանները, տգէտները, զինուորները և մանաւանդ «ուսումնասեաց»ները «ի կարգէն և ի շնորհացն», մինչև որ ապաշխարէին ու զգաստանային: Կը յանձնարարէ անոնց «պահել յարդարուն զպարոցն ի վանսն և յայլ արժանաւոր տեղիս⁸», խստանալով չափսզանցօրէն տգէտ և անուս կղերականներուն դէմ, լսած և ստուգած ըլլալով թէ շատ երէցներ «վասն ուսումնատեցութեան՝ ինքեանք չեն ուսեալ և զորդիս իւրեանց ի դպրոց ոչ ունին, և վասն տգիտութեան՝ երիցութեան արժանի ոչ լինին⁹». այնպիսիներուն կը հրամայէ «զորդիս ի դպրոց կալարուք, զի գիտունք լինիցին¹⁰»:

1. Կանոնք Ս. Սահակայ Գ. էջ 119-120.

2. Պատմութիւն Հայոց. Զ. ր. էջ 263.

3. Կանոնք Ս. Սահակայ Զ. էջ 78.

4. Անդ. Ա. էջ 71.

5. Անդ. Ա. էջ 80.

6. Անդ. Բ. էջ 81.

7. Անդ. Բ. և Գ. էջ 81-82.

8. Անդ. Ժ. էջ 85.

9. Անդ. Ա. էջ 88.

10. Անդ. Բ. էջ 90.